ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Շենկանի համայնք
Հեռ. 055-60-42-26
31/05/2016թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈԶԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզալյան
Ձեզ ենք ներկայացնում Շենկանի համայնքի ավագանու 2016թ-ի մայիսի 27-ի N3 հերթական նիստի N11,N112,N13,N14,N15 որոշումները:
Առդիր 6 էջ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
31 05 2016թ.
Մուտք № 7/4027-16

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԺՈՐԱ ՉՈԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016 թվական N 11

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԿԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի պահանջով՝ Շենկանի համայնքի ավագանին որոշեց

Հաստատել Շենկանի համայնքի ավագանու 27.05.2016 թվականի նիստի օրակարգը

1. «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին
2. Շենկանի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին
3. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:
4. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

	Կողմ-4	Դեմ-0	Չեռնպահ-0
Ավագանիներ՝	1. Խ.Զոլոյան		
	2. Անդրեյ Օզմանյան		
	3. Ա. Ավդոյան		
	4. Ալիկ Օզմանյան		

Համայնքի ղեկավար՝ Ժ. Զոլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիս 2016 թվական N12

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,

ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում պահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման, **ավագանին որոշում է՝**

1. Համայնքի վարչական սահմանում գտնվող գույքը, որը հաշվառված չէ համայնքի հաշվեկշռում սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, Շենկանի համայնք ....:

Խողովակաշարեր (հետագայում)

Գույի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝ խմելու ջուր

Հողամասի գործառնական նշանակությունը՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանիներ՝ 1. Խ. Չոլոյան

2. Անդրեյ Օզմանյան

3. Ա. Ավդոյան

5. Ալիկ Օզմանյան

Համայնքի ղեկավար՝ Ժ. Չոլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016 թվական N 13

ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33.1 հոդվածի 3-րդ կետով, 54.1 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» ՀՀօրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը

համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Կողմ-4	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ավագանիներ՝	1. Խ.Զոլոյան		
	2. Անդրեյ Օզմանյան		
	3. Ա. Ավդոյան		
	4. Ալիկ Օզմանյան		

Համայնքի ղեկավար Խ. Զոլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016 թվական N 14

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1 կետի, 33.1 հոդվածի 1-4-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-4 **Դեմ-0** **Չեռնպահ-0**

Ավագանիներ՝ **1. Խ.Զոլոյան**

2. Անդրեյ Օզմանյան

3. Ա. Ավդոյան

4. Ալիկ Օզմանյան

Համայնքի ղեկավար՝ **Զոլոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՇԵՆԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016 թվական N 15

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդհոդվածի 10.2-րդ կետը և 33.1 հոդվածը

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Կողմ-4	Դեմ-0	Չեռնպահ-0
Վարչականներ՝	1. Խ.Զոլոյան		
	2. Անդրեյ Օզմանյան		
	3. Ա. Ավդոյան		
	4. Ալիկ Օզմանյան		

Համայնքի ղեկավար՝ Խ. Զոլոյան